

# ՈւՂԵՑՈՒՅՑ «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոդվածը պետք է ներկայացվի անգլերեն լեզվով:

Հոդվածը պետք է կառուցված լինի հետևյալ ձևաչափով՝

**հոդվածի վերնագիր, համառոտագիր, հիմնաբառեր, հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում, աշխատավայր, պաշտոն:**

Նշվում է նաև հեղինակի էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը և ORCID ID-ն:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում ներկայացվում են գիտական այն արդյունքները, որոնք առավել առաջնահերթ են տվյալ ոլորտում և երբևէ հրատարակված չեն եղել:

Աշխատանքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

- համառոտագիր (ABSTRACT),
- հիմնաբառեր (KEYWORD),
- ներածություն (INTRODUCTION),
- գրականության ակնարկ (LITERATURE REVIEW),
- հետազոտության մեթոդաբանություն (RESEARCH METHODOLOGY),
- վերլուծություն (FINDINGS, RESULTS, DISCUSSION),
- եզրակացություններ (CONCLUSIONS),
- գրականություն (REFERENCES):

Նշված բաժինները վերնագրերով առանձնացնելը պարտադիր է: Անհրաժեշտության դեպքում հոդվածի բովանդակությունը կարող է բաժանվել առանձին բաժինների՝ իրենց ենթավերնագրերով:

**1. Համառոտագիր:** Համառոտագրում ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունն ու ստացված արդյունքները (150-250 բառ):

**2. Հիմնաբառեր (ոչ ավելի, քան 7 բառ):**

**3. Ներածություն:** Ակնարկ է կատարվում թեմայի արդիականությանը, նպատակին և վերջին տարիների զարգացումներին (150-250 բառ):

**4. Գրականության ակնարկ:** Կատարվում է հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն: Ներկայացվում են այն հիմնական ուղղու-

թյունները, որոնք զարգացրել են այլ հետազոտողներ՝ թեմայի ուսումնասիրության շրջանակներում (300-1200 բառ):

**5. Հետազոտության մեթոդաբանություն:** Ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունն ու գործիքակազմը՝ հիմնավորելով վերջիններիս ընտրության անհրաժեշտությունը (200-700 բառ):

**6. Վերլուծություն:** Բացահայտվում են հետազոտության օբյեկտի օրինաչափությունները, միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները և այլն, որոնք ձևավորում են հետազոտության հիմնական արդյունքները (1000-2500 բառ):

**7. Եզրակացություններ:** Հետազոտության հիմնական արդյունքների համառոտ նկարագրություն (200-500 բառ):

**8. Գրականության ցանկ:** Ներկայացվում է անգլերեն լեզվով պահպանելով այբբենական կարգը:

Գրականության ցանկից առաջ, հեղինակի ցանկությամբ կարող է լինել նաև երախտիքի խոսք:

Հոդվածը կարող է ներկայացվել 2100-6100 բառի շրջանակներում:

#### **ՀՈՂՎԱԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Տառատեսակը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, էջի չափը՝ A4, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ:

Հղումները կատարվում են համաձայն Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի (APA) կարգի (<https://libraryguides.vu.edu.au/apa-referencing/7Webpages>):

Հոդվածում ներկայացված գծապատկերները և աղյուսակները պետք է ունենան խմբագրական միջամտության հնարավորություն: